

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ✓ 2016թ. նոյեմբերի 9-10-ը ԵՄ ԹԱՅԵՔՍ գործիքի շրջանակում ՀՀ ԱՎԾ-ում էին Ավստրիայի վիճակագրության գլխավոր տնօրեն Կոնրադ Պեսենդորֆերը, ռիսկերի կառավարման բաժնի պետ Վելներ Հոլգերը և միջազգային կապերի բաժնի պետ Բրիգիտ Գրանդիսը Վիճակագրական կազմակերպության կառուցվածքի և կառավարման վերաբերյալ քննարկումներ իրականացնելու նպատակով,
- ✓ 2016թ. նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 1-ը ՀՀ ԱՎԾ-ում էր Դանիայի վիճակագրության ներկայացուցիչ, ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի ղեկավար Շարլոտ Յուլ Հանսենը «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի կառավարող կոմիտեի հինգերորդ նիստին մասնակցելու նպատակով,
- ✓ 2016թ. դեկտեմբերի 12-16-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Իտալիայի վիճակագրության փորձագետներ Սիմոնա Ռամբերտին և Դոնաթելլա Վինյանին «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Ջրի հաշիվներ» բաղադրիչի շրջանակում աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2016թ. դեկտեմբերի 6-ին ՀՀ ԱՎԾ-ում էին Էներգետիկայի միջազգային գործակալության փորձագետներ Քլեիր Մորելին, Ագնեշկա Կոշլնիսկին և Աննա Պետրուսը EU4Energy Data ծրագրի մեկնարկման նպատակով,
- ✓ 2016թ. դեկտեմբերի 5-9-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Եվրամիության վիճակագրական ծառայության կողմից հաստատված անկախ փորձագետներ Պավել Վանկուրան և Դիտա Ջեմիտեն Ազգային վիճակագրական ծառայության տուրիզմի վիճակագրության հատվածի գնահատում իրականացնելու նպատակով,

- ✓ 2016թ. դեկտեմբերի 23-ին ՀՀ ԱՎԾ-ում էին ԱՄՆ Գյուղատնտեսության դեպարտամենտի փորձագետ Մայքլ Սթայները և ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության տեղեկատվական տեխնոլոգիաների և վիճակագրության գծով միջազգային փորձագետ Վասիլ Պետրեն «ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքները» շնորհանդեսին մասնակցելու նպատակով,

- ✓ 2016թ. դեկտեմբերի 26-27-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Ռուսաստանի պետական վիճակագրական ծառայության արտասահմանյան երկրների վիճակագրության և միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ Իլյա Մատյուշևը, ձեռնարկությունների վիճակագրության վարչության բաժնի պետ Վալերիա Ֆեդոսևևան և նույն վարչության բաժնի պետի տեղակալ Նատալյա Ուրյադնիկովան Արդյունաբերական արտադրանքի և էներգետիկայի վիճակագրության և Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև 2020թ. Երկարաժամկետ տնտեսական համագործակցության ծրագրի իրականացման 2014-2017թթ. Միջոցառումների պլանի «Ծրագրի իրականացման տեղեկատվական-վիճակագրական ապահովում» գլխի կատարման շրջանակում երկկողմանի համագործակցությանն առընչվող հարցերի քննարկման նպատակով: